ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԸ Ս. ԵՂԻԱԶԱՐՅԱՆԻ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՅԱՑՔՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ

ՌՈԲԵՐՏ ՍԱՐԻՆՅԱՆ

XIX դ. երկրորդ կեսում գյուղական համայնքի քննության հարցը սրությամբ դրվեց՝ զբաղեցնելով հասարակական ուշադրությունների ուշադրությունը։ Վերլուծվում կամ առաջադրվում էին տեսակետներ, որոնք նպատակ ունեին որոշելու համայնքի տեղն ու դերը հասարակական զարգացման պրոցեսում։ Համայնքի հարցը իր վրա էր սևեռել ինչպես ռուսական, այնպես էլ եվրոպական անվանի հետազոտողների ուշադրությունը։ Եվ դա հասկանալի էր։ Կապիտալիզմի արագ զարգացումն իր ոլորապտույտի մեջ էր առել համայնքը՝ փոխակերպելով համայնական հարաբերությունների կառուցվածքը։ Օրակարգում դրված էր համայնքի պատմական գոյության իրավունքը։ Հասարակական զարգացման այդ բեկումնային ժամանակաշրջանում հայտնի տնտեսագետ Ս. Եղիազարյանը հանդես եկավ մի աշխատությամբ, որով նպատակ էր հետամտում «ուսումնասիրել Անդրկովկասի հաստատությունների պատմությունը և առաջին անգամ փորձում տալ գյուղական համայնքի յուրահատուկ կազմակերպության ուրվագիծը»[1]։ Այդ աշխատությունը տնտեսագիտական կարևոր արժեք ունի համայնքի սոցիալական նկարագրի բացահայտման տեսակետից և հանդիսանալով նախահեղափոխական հետազոտություններից «լավագույնը»[2], հարուստ վիճակագրական ու փաստական նյութ է պարունակում ժամանակաշրջանի գյուղացիության տնտեսական վիճակի վերաբերյալ։ Երկրամասի համայնական հարաբերությունների հարցերը մինչ այդ արծարծվել էին առանձին աշխատություններում, որոնցից Ս. Եղիազարյանը հատկապես արժեքավորում է ռուս հայտնի տնտեսագետ Մ. Կովալևսկու հետազոտությունները և Վ. Միլլերի օսեթական էտյուդները։

Հավանաբար, կրելով Մ. Կովալևսկու ազդեցությունը, Ս. Եղիազարյանը գտնում էր, որ համայնական հողատիրությունը զարգացման սկզբնական շրջանում հատուկ է եղել բոլոր ազգերին։ Նա չի համաձայնում այն հեղինակների հետ (Ա. Երիցյան, Ս. Զելինսկի, Ն. Աբելով), ովքեր հայ ժողովրդի համար բնորոշ էին համարում հողատիրության միայն համայնական ձևը[3]։ «Որ համայնքը գոյություն ուներ և գոյություն ունի ոչ միայն երբևիցե հին Հայաստանի կազմի մեջ մտնող Անդրկովկասի շրջաններում,— գրում է Ս. Եղիազարյանը,— այլև ամբողջ Պարսկաստանում և Փոքր Ասիայում, դա փաստ է, բայց,

---

[1] С. А. Егиазаров, Исследования по истории учреждений в Закавказье, ч. I, Сельская община, Казань, 1889, с. 1.

[2] И. П. Петрушевский, Очерки по истории феодальных отношений в Азербайджане и Армении в XVI—начале XIX вв., Л., 1949, с. 222.

[3] «Материалы по изучению экономического быта государственных крестьян в Закавказье», т. IV, ч. I, Тифлис, 1887, с. 50.

մյուս կողմից, մասնավոր հողային սեփականության միաժամանակյա գոյությունը նույնպես կասկածի ենթակա չէ»[4]։ Ակներև է, որ Ս. Եղիազարյանը ժխտելով միայն մասնավոր սեփականության նախասկզբնական գոյության մասին բուրժուական տնտեսագետների գաղափարը, միաժամանակ նշում էր նրա առկայությունը հին Հայաստանում։

Հայտնի է, որ Հայաստանում համայնական հողօգտագործման հիմքը համփա-չարեքային համակարգն էր։ Ըստ այդ համակարգի, մեկ համփայի հողաբաժին ստանում էին 16 շունչ ունեցող ընտանիքները։ Դրանցից քիչ, բայց զույգ թվով ընտանիքները համապատասխանաբար ստանում էին $^3/_4$, $^1/_2$, $^1/_4$, $^1/_8$ համփա։ Կենտ թվով ընտանիքներին լրացուցիչ տրվում էր մեկ շնչի հողաբաժին։ Ս. Եղիազարյանն այսպիսի տարբերակումը համարում էր «արհեստական» և գտնում, որ այդ «դասակարգումն» արվել է ավելի շատ հողաբաշխման հարմարության «պրակտիկ» նկատառումներից ելնելով։ Ընդհանրապես համփայի տնտեսական էության բացահայտումը ելակետային նշանակություն ունի հայկական համայնքի հողօգտագործման հարաբերությունների լուսաբանման տեսակետից։ Այն ոչ միայն աննկատ չմնաց Ս. Եղիազարյանին, այլև դարձավ նրա հետազոտությունների առանցքային հարցերից մեկը։ Մի կողմ թողնելով համփա-չարեքային համակարգի վերաբերյալ երկրամասի ագրարային հարաբերությունները հետազոտողների մեկնությունները, կարևոր ենք համարում անդրադառնալ Ս. Զելինսկու՝ համփան «վճարունակություն» դիտելու մտայնության[5] Ս. Եղիազարյանի քննությանը, որն ունի սկզբունքային նշանակություն նրա էության բացահայտման առումով։ Քննադատելով Ս. Զելինսկուն, Ս. Եղիազարյանը գրել է. «Արևելքի գյուղական համայնքում ամենից առաջ որոշում են համայնքի անդամի տնտեսական, ունեցվածքային ունակությունը և հետո նոր հարկում այդ «ունակությանը» համապատասխան հարկերն ու պարհակները. այլ խոսքով ոչ թե հողի չափն է կախված հարկերի չափից, այլ. ընդհակառակը, հարկերի չափը կախված է համայնքի անդամի հողաբաժնի մեծությունից»[6]։ Հետևապես, համփատերը մեծ հողաբաժին է ստանում ոչ թե այն պատճառով, որ ավելի շատ հարկեր է վճարում և պարհակներ կատարում, այլ այն, որ համայնքի մյուս անդամների համեմատ մեծ հողաբաժին ունի։ Համփայի տնտեսական ունակության և հարկերի ու պարհակների փոխհարաբերության այսպիսի հարցադրումն ինքնին տրամաբանական է։ Սակայն ինչպես իրավացիորեն նկատել է Մ. Եգանյանը, համփան որպես նահապետական ընտանիքի տնտեսական կարողության միակ չափ իր ֆունկցիան կատարում էր վաղ ֆեոդալիզմի շրջանում։ Հետագայում մի շարք տնտեսական գործոնների ազդեցության հետևանքով համփան բաժանվում է առանձին մասերի, մանրատվում է՝ խախտելով ընտանիքի հողաբաժնի մեծության ու վճարունակության ուղիղ համեմատական կապը։ Ուստի միակողմանի պետք է համարել ինչպես Ա. Պարվիցկու՝ համփան «վճարունակություն» դիտելու մտայնությունը, այնպես էլ «վճարունակությունը» միայն

---

[4] С. А. Егиазаров, նշվ. աշխ., էջ 151։

[5] «Материалы по изучению экономического быта государственных крестьян в Закавказье», т. III, ч. I, Тифлис, 1886, с. 20—21.

[6] «Свод материалов по изучению экономического быта государственных крестьян Закавказского края», т. I, Тифлис, 1887, с. 18.

հողաբաժնի մեծությունից ածանցելու Ս. Եղիազարյանի տեսակետը։ Այն իբրև տնտեսական կատեգորիա «արտահայտում է յուրաքանչյուր ընտանիքի վիճակն ու վճարունակությունը»[7]։

Հողերի վերաբաժանման համփային կարգը հատկապես կապիտալիստական հարաբերությունների զարգացման ժամանակաշրջանում, երբ բնատնտեսությունն իր տեղը զիջում էր ապրանքային տնտեսությանը, տեղիք էր տալիս լուրջ տնտեսական հակասությունների՝ նպաստելով գյուղի սոցիալական ու դասակարգային շերտավորմանը։ Գյուղական բուրժուազիան իր ձեռքում էր կենտրոնացնում լավագույն հողերը։ Դա ուղեկցվում էր գյուղացիության քայքայման, վաշխառուական կապիտալի աշխուժացման և տարագնացության ուժեղացմամբ։ Սոցիալական այս ներհակություններն առիթ էին տալիս համփա-չարեքային համակարգի պատմական հարատևության ստուգաբանումներին։ Մի շարք հեղինակներ (Ա. Պարվիցկի, Ֆ. Մարկով) առավել նպատակահարմար էին գտնում հողերն ըստ շնչի բաշխման սկզբունքը[8]։ Ս. Եղիազարյանը, ընդհակառակը, այն կարծիքին էր, որ դա չափազանց բացասական հետևանքներ է ունենում գյուղացիական տնտեսությունների վրա՝ հանգեցնելով հողաբաժինների չափից ավելի մանրատմանը և շերտընդմիջությունների առաջացմանը։ Նա, չբացառելով նաև համփային համակարգի թերությունները՝ կապված անհող շնչերի առաջացման հետ, այնուամենայնիվ, հակված էր համայնքի ներսում հողի, ջրի, հարկերի և պարհակների բաշխման համփա-չարեքային սկզբունքի պահպանմանը, որն իբր թե միջոց էր՝ ապահովելու գյուղացիության նյութական բարեկեցությունը։ Ս. Եղիազարյանի կարծիքով համփային համակարգի թերությունները հնարավոր էր վերացնել «աշխուրջ վերահսկողության և տեղական կառավարությունների ժամանակին միջամտության»[9] միջոցով։ Ակներև է, որ այս դատողություններում բացակայում է տնտեսական զարգացման օրենքների գիտականությունը և անտեսվում են հասարակական առաջընթացի օրինաչափությունների ճանաչումն ու պատմական պրոցեսների զգացողությունը։ Նա չի նկատում, որ իրավական միջամտությամբ չի կարելի կանխել տնտեսական զարգացման ընթացքը։ Համայնքի հարցերում Ս. Եղիազարյանի վրա նկատելի է նարոդնիկության ազդեցությունը և համփա-չտրեքային համակարգը նրա համար ծառայում էր որպես միջոց՝ ապահովելու համայնքի հետագա հարատևությունը։

Հայտնի է, որ Մ. Կովալևսկին եթե առաջավոր եվրոպական երկրներում համայնքի քայքայման փաստը դիտում էր որպես նրա ներքին զարգացման արդյունք, ապա գաղութային երկրներում, ինչպես, օրինակ, Հնդկաստանում, վճռական տեղ էր հատկացնում բռնությանն ու քաղաքական գործոններին[10]։ Նույն ձևով էլ Ս. Եղիազարյանը հողի ըստ շնչի բաշխումը դիտում էր որպես միջոց, որն արհեստականորեն արագացնում էր համայնքի քայքայումը։ Այդ սկզբունքը թեև «մաթեմատիկորեն» արդարացնելի է, սակայն հողաբաժինն-

---

7 М. А. Еганян, Аграрные отношения в Армении до и после ее присоединения к России,с. 168 *(դոկտորական դիսերտացիա, պահվում է ՀՍՍՀ ԳԱ տնտեսագիտության ինստիտուտի գրադարանում)։*

8 «Материалы по изучению экономического быта государственных крестьян в Закавказье», т. III, ч. I, с. 278.

9 С. А. Егиазаров, *նշվ. աշխ., էջ 70։*

10 «История русской экономической мысли», т. II, ч. I., М., 1959, с. 202.

րի մասնատումը դժվար կացության առաջ էր կանգնեցնում հատկապես փոքր ընտանիքներին, որոնք, հնարավորություն չունենալով հողը մշակելու, վեր էին ածվում վարձու բանվորների։ Խախտվում էր համայնքի ներքին կառուցվածքը, «գյուղացու աչքում հողը կորցնում է և իր արժեքը և իր տնտեսական նշանակությունը»[11]։ Եվ Ս. Եղիազարյանը փորձում է համապատասխան թվական տվյալներով ցույց տալ, որ այն շրջաններում, ուր իշխում է համփա-չարեքային համակարգը, անհողների թիվն անհամեմատ քիչ է[12]։ Հակառակ համայնքի պահպանման Ս. Եղիազարյանի ակնկալություններին, «տնտեսական զարգացման ուժը» ցուցադրում էր այլ օրինաչափություն։ Հայտնի է, որ 1882 թ. Երևանի նահանգապետը կարգադրում է հողաբաժինները բաշխել ոչ թե համփա-չարեքային, այլ ըստ շնչերի սկզբունքով։ 1890-ական թվականներին հրապարակվում են գյուղացիների հողաբաժինների վաճառքն ու գրավ դնելն արգելող օրենքներ, որոնք նպատակ ունեին արգելակելու համայնքի քայքայումը։ Վ. Ի. Լենինը գրել է, որ «...հին՝ թե՛ կալվածատիրական և թե՛ գյուղացիական հողատիրության հեղաբեկումը տնտեսական անվերապահ անհրաժեշտություն է դարձել։ Այդ հեղաբեկումը բացարձակապես անխուսափելի է, և աշխարհում ոչ մի ուժ չի կարող խանգարել դրան»[13]։

Պատմահասարակական պայմանները համայնքի քայքայումը դարձնում էին օրինաչափ, որպես հասարակության զարգացման համընդհանուր օրինաչափության դրսևորում։ Համայնական տնտեսաձևի սոցիալական համակարգի ոչնչացումը պայմանավորված էր արտադրողական ուժերի զարգացման հետևանքով նրա անդամների գույքային ու սոցիալական շերտավորումով։ Թերևս հենց այդ հանգամանքներով էր պայմանավորված համայնական հողօգտագործման սկզբունքների որոշ էվոլյուցիան, հողերի բաշխման այն նոր ձևի ի հայտ գալը, որի մասին Ս. Եղիազարյանը գրում է. «Այս դեպքում ծխին այս կամ այն հողաբաժնի հատկացման համար հիմք է ծառայում ոչ թե առանձին շնչերի թիվը, ինչպես դա տեղի ուներ համփա-չարեքային հին ձևի ժամանակ, այլ պարզապես ծխի տնտեսական ունակությունը—աշխատունակ շնչերի թիվը և տնտեսական գույքը...։ Հողաբաժնի հատկացման ժամանակ հաշվի է առնվում գլխավորապես ընտանիքի տնտեսական ունակությունը»[14]։ Հեղինակը չի անդրադառնում հողերի վերաբաշխման այս նոր կարգի և նրա դրդապատճառների քննությանը, այն չի կապում ավատական կապանքներից ազատվող և կապիտալիստական զարգացման ուղին թևակոխած հայկական գյուղում կատարվող տեղաշարժերի հետ։ Ընդհակառակը, հենվելով լիբերալ-նարոդնիկական ուղղության ներկայացուցիչ Պ. Սոկոլովսկու «Ռուսաստանի հյուսիսում գյուղական համայնքի պատմության ուրվագծեր» աշխատության վրա, նա փորձում է ցույց տալ, որ հողերի նման դասակարգումը տեղ ուներ նաև հին ռուսական համայնքում, ուր ծխերը բաժանվում էին «լավագույնի», «միջակի» և «թույլի»՝ ըստ տնտեսական ունակության[15]։ Ինչպես իրավացիորեն նկատում է Ս. Զուրաբյանը, դա «ապրանքադրամական հարա-

---

11 С. А Егиазаров, նշվ. աշխ., էջ 69։
12 Նույն տեղում, էջ 70։
13 Վ. Ի. Լենին, Երկ, հ. 17, էջ 114—115։
14 С. А. Егиазаров, նշվ. աշխ., էջ 63։
15 Նույն տեղում, էջ 63—64։

բերությունների զարգացման և համայնքի անդամների միջև տնտեսական անհավասարության աճի հետևանք»[16] էր։ Այն վկայում էր գյուղում կատարվող դասակարգային շերտավորման մասին, այն մասին, որ հողերի վերաբաժանման կարևոր գործոն էին դարձել տնտեսական լծակները։ Եվ չնայած համայնքի կենսունակության վերաբերյալ Ս. Եղիազարյանի դատողություններին, այնուամենայնիվ զարգացման պատմական պրոցեսի դիալեկտիկական օրինաչափությունը նրան ստիպում է խոստովանելու, որ «համայնքի կառավարումն ընդունում է օլիգարխիկ երանգ և համայնական հողատիրությունն աստիճանաբար քայքայվում է»[17]։ Որո՞նք էին նրա կարծիքով այդ քայքայումը պայմանավորող գործոնները։ Ս. Եղիազարյանը գտնում էր, որ համայնքի քայքայումը հատկապես նկատելի է և ինտենսիվ ձևով է կատարվում դաշտավայրային տաք շրջաններում, որտեղ զարգացած են այգեգործությունն ու տեխնիկական կուլտուրաների մշակումը։ «Սակավահողությունն ու սակավաջրությունը,— գրում է նա,— գյուղացիական վերնախավին դրդում են առավել արժեքավոր և ջրովի տեղամասերի աստիճանական ցանկապատմանը. վերջիններս ցանկապատումից հետո ամրացվում էին տիրոջը՝ ժառանգական տնօրինության իրավունքով։ Ցանկապատումը, այսպիսով, հանդիսանում է համայնքի քայքայմանը նպաստող գլխավոր գործոններից մեկը»[18]։ Համայնքի քայքայման հետ, շարունակում է նա, հողային սեփականությունն աստիճանաբար կենտրոնանում է ունևոր դասի ձեռքում, որը հանգեցնում է չքավոր անդամների աշխատանքի շահագործմանն ու բատրակության առաջացմանը։ Վկայակոչելով բազմաթիվ փաստեր, Ս. Եղիազարյանը նշում է, որ ցանկապատումների միջոցով հողերի սեփականացման երևույթը տեղի է ունեցել ինչպես Անգլիայում ու Գերմանիայում, այնպես էլ Դոնի կազակների ժամանակակից համայնքներում։ Սակայն հայ տնտեսագետը չի նկատում, որ հողերի և առաջին հերթին համայնական հողերի ցանկապատումը, ինչպես եվրոպական երկրներում կապիտալիզմի նախասկզբնական կուտակման ժամանակաշրջանում, այնպես էլ երկրամասում պայմանավորված էին նոր տնտեսական հարաբերությունների, նոր տնտեսաձևի առաջացմամբ։ Ինչպես Անգլիայում հողերի ցանկապատման արագացման համար կարևորագույն խթան հանդիսացավ բրդի մանուֆակտուրայի արագ զարգացումը, այնպես էլ հայ իրականության մեջ նորամուտ արդյունաբերությունն առաջադրում էր գյուղատնտեսական բազմապիսի հումքի պահանջը։ Այդ պրոցեսը հանգեցնում էր մի կողմից խոշոր հողասեփականատերերի առաջացմանն ու արտադրության նորագույն եղանակների ներդրմանը, մյուս կողմից՝ շուկայական հարաբերությունների ընդլայնմանը։ Սակայն իրավացի է Ս. Եղիազարյանի այն նկատումը, որ «տնտեսական հեղաշրջումը—նահապետական համայնքի աստիճանական քայքայումը»[19] համապատասխան փոփոխություններ է առաջ բերում ժողովրդի իրավական գիտակցության մեջ։ Փաստորեն ցանկապատված հողատարածությունները վեր են ածվում ժառանգական կամ մասնավոր սեփականության՝ ստանալով համարժեքային բովանդակություն, չնայած իրավական գիտության առումով

16 Ս. Շ. Զուրաբյան, Հայ տնտեսագիտական մտքի զարգացման ուրվագծեր, Երևան, 1959, էջ 309։

17 С. А. Егиазаров, նշվ. աշխ., էջ V։

18 Նույն տեղում, էջ 151։

19 Նույն տեղում։

դրանք տարբեր ինստիտուտներ են։ Հենց այս առումով էլ նա հակադրվում է բոլոր այն հեղինակներին, ովքեր, հենվելով մուսուլմանական արևելքի կրոնական օրենքների վրա, ժխտում էին մասնավոր սեփականության առկայությունը, գտնելով, որ դա լոկ «անբովանդակ ֆիկցիա» է[20]։ Այդպիսին է Ս. Եղիազարյանին ներկայանում նաև մուլքը, որովհետև այն ձեռք է բերված «այն ճանապարհով, ինչպես ուրիշ շատ սեփականություններ»[21]։

Գյուղի բուրժուականացումն իբրև հետևանք առաջ բերեց մի նոր երևույթ՝ վարձակալական հարաբերությունների ուժեղացումը։ Գյուղական բուրժուազիայի ձեռքում հողերի կենտրոնացման, վարձակալական հարաբերությունների աշխուժացման հետևանքով գյուղացիության մի հսկայական մասը զրկվելով արտադրության միջոցներից, աշխատուժի համապատասխան կիրառում չէր գտնում և դիմում էր տարագնաց աշխատանքի՝ ապրուստի միջոցներ փնտրելով երկրամասի արդյունաբերական կենտրոններում։ Հողը, ինչպես նշում է Ս. Եղիազարյանը, վարձակալության էր տրվում ամենածանր պայմաններով։ Նա տարբերակում է հողի վարձակալության երեք հիմնական ձևեր՝ առանձին տնատերերի, գյուղացիական խմբերի, իսկ սակավադեպ՝ ամբողջ համայնքների կողմից։ Հաճախ վարձակալում էին ոչ միայն հողաբաժնով չապահովված պետական գյուղացիները, այլև նրանց այն մասը, որ տնօրինում էր ավելցուկ աշխատուժ[22]։

Վարձակալական հարաբերություններ ծնող դրդապատճառներից գլխավորը, Ս. Եղիազարյանի կարծիքով, սակավահողությունն ու սակավաջրությունն են։ «Գյուղացիների կենցաղում,— գրում է նա,— վարձակալված հողը կիրառվում է բավական հաճախ... վարձակալների գլխավոր համակազմը, համենայն դեպս, բաղկացած է սակավահող գյուղացիներից...։ Գլխավոր պատճառների շարքում, որոնք գյուղացիներին հարկադրում են դիմել մասնավոր տիրույթների հողերը վարձելուն, առաջին տեղը գրավում են սակավահողությունն ու սակավաջրությունը»[23]։

Ս. Եղիազարյանը հատուկ աշխատություն է նվիրել ջրատիրման համայնական սկզբունքների վերլուծությանը։ Նա ցույց է տալիս, թե ինչպես են համայնքի ներսում հետզհետե խարխլվում ջրի բաշխման դեմոկրատական ավանդույթները։ Փաստորեն ջուրը միրաների և ջուվարների ձեռքին դարձել էր մասնավոր սեփականություն, որպես շահագործման, նոր հողերի յուրացման և կաշառակերության միջոց[24]։ Նշված հանգամանքները տարագնացության գլխավոր պատճառ դիտելու մտայնությունն ընդհանրապես հատուկ էր լիբերալ ուղղության գրեթե բոլոր տեսաբաններին։ Նրանք նշում էին փաստը, առանց խորանալու այդ երևույթն առաջացնող տնտեսական հարաբերությունների էության մեջ։ Եվ տրամաբանական է, որ կապիտալիզմի զարգացման հետևանքով վարձակալական հարաբերությունների արմատավորման հարցը նը-

---

20 Նույն տեղում, էջ 138։

21 Ս. Եղիազարյան, Ֆեոդալական հողատիրությունը Եվրոպայում, մեր երկրի հայաբնակ մասում և մեր գյուղացու այժմյան տնտեսական դրությունը, Թիֆլիս, 1882, էջ 22։

22 С. А. Егиазаров, Исследования по истории учреждений в Закавказье, ч. I, с. 199.

23 Նույն տեղում։

24 С. А. Егиазаров, О водовладении в Кавказском крае, Киев, 1896.

ռանք լայն շրջագծով քննության չէին ենթարկում։ «Մեր լիբերալները,— գրել է Վ. Ի. Լենինը,— «գյուղացիական հարցը» մշտապես զննում են գյուղացիների «հողասակավության» կամ նրանց կենցաղը «պետականորեն կարգավորելու» անհրաժեշտության կամ թե այս կամ այն «նորմայով» հող հատկացնելու (այս մեղքը գործում են նաև նարոդնիկները) տեսակետից։ Այսպիսի տեսակետը արմատապես սխալ է»[25]։

Դեռևս 1840-ական թվականներից սկսած ավելանում էր գյուղացիների պահանջարկը փողի նկատմամբ՝ կապված մթերային բահրան դրամականով փոխարինելու հետ։ Այս հանգամանքը, հարկերի ու բահրաների հետագա ավելացումը, սակավահողությունն ու գյուղացիական ապրանքների իրացման դեռևս սահմանափակ հնարավորությունները բարենպաստ պայմաններ ստեղծեցին վաշխառուական կապիտալի աշխուժացման համար, որն ուղեկցվեց գյուղացիության շահագործման և տնտեսական քայքայման ուժեղացմամբ։ Գյուղացին հնարավորություն չունենալով ժամանակին մարելու պարտքը, վաշխառուին զիջում էր հողի օգտագործման իրավունքը։ «Չի կարելի անտարբերությամբ նայել այն բանին,— գրում է Ս. Եղիազարյանը,— թե ինչպես կուլակներն ու գյուղացիության ունևոր դասը ամեն գնով բռնագրավում ու յուրացնում են ամենաեկամտաբեր և արժեքավոր հողերը»[26]։ Նա վկայակոչումներ է անում Յ. Դյակոնսկուց, Խան-Աղովից և Ա. Գաբվիցկուց՝ ցույց տալու կուլակության շահարկությունները։ Վարկը ժամանակին չմարելով, գյուղացին ստիպված էր կա՛մ վաճառել իր գույքը, կա՛մ էլ վարկատուին զիջել իր հողաբաժնի օգտագործման իրավունքը՝ մինչև պարտքի մարումը։ Առաջիններ կա՛մ իրենց հողաբաժինները տալիս էին վարձակալության, կա՛մ էլ վարձակալվում էին համագյուղացի հարուստների մոտ աշխատելու, իսկ երկրորդները ստիպված թողնում էին հողագործությունը՝ դիմելով այլ զբաղմունքների, կազմավորելով «անտնտես ծխեր»[27]։ Այս բոլորը հետևանք էր «վաշխառության և աշխատանքի ստրկացման»[28], որոնք էլ, Ս. Եղիազարյանի կարծիքով, խախտում էին համայնական հարաբերությունների հիմքերը։ Ընդհանրապես, վաշխառուական կապիտալը որպես շահագործման միջոց միշտ էլ նրպաստել է սեփականության հին ձևերի խորտակմանը, գյուղացիական մասսաների քայքայմանը, արտադրության միջոցներից մասնը արտադրողների զրկմանը և վարձու բանվորության առաջացմանը։ Աշխատանքի ստրկացումն ու վաշխառուական կապիտալն արդեն վկայությունն էին հայկական գյուղում կապիտալիստական հարաբերությունների զարգացման, որպես նրա սկզբնական և հասուն ձևերի։ «Չէ՞ որ այդ ստրկացումը,— գրել է Վ. Ի. Լենինը,— որ նա հենց նոր ոչնչացրեց նրա ռեգրեսիվության համար, ոչ այլ ինչ է, եթե ոչ կապիտալիզմի սկզբնական արտահայտություն հողագործության մեջ, նույն այն կապիտալիզմի, որը հետագայում տանում է դեպի տեխնիկայի պրոգրեսիվ վերելքը։ Իսկապես, ի՞նչ բան է ստրկացումը։ Դա արտադրության իր սեփական միջոցներն ունեցող ու շուկայի համար աշխատելու հարկադրված տրն-

---

25 Վ. Ի. Լենին, Երկ, հ. 25, էջ 112։

26 С. А. Егиазаров, Исследования по истории учреждений в Закавказье, ч. I, с. 231.

27 Նույն տեղում։

28 Նույն տեղում։

տնօրատիրող կախումն է դրամատիրոջից, կախում, որ, որքան էլ տարբեր ձևերով արտահայտվի (վաշխառուական կապիտալի, թե վաճառահանության մենաշնորհը դարձրած մեծագնորդի կապիտալի ձևով), միշտ այն հետևանքն է ունենում, որ աշխատանքի արգասիքի հսկայական մասը հասնում է ոչ թե արտադրողին, այլ՝ դրամատիրոջը։ Հետևապես, նրա էությունը զուտ կապիտալիստական է, և ամբողջ առանձնահատկությունն այն է, որ կապիտալիստական հարաբերությունների այդ սկզբնական, սաղմնային ձևն ամբողջովին կաշկանդված է նախկին, ճորտատիրական հարաբերություններով»[29]։

Ս. Եղիազարյանը հայկական համայնքի առանձնահատուկ գծերից է համարում նրա համադասային բնույթը, այն որ գյուղացիների հետ մեկտեղ ապրում և հողին տիրում էին նաև այլ խավերի ներկայացուցիչներ։ «Գյուղական համայնքը մուսուլմանական Արևելքում և Անդրկովկասում,— գրում է նա,— չունի մեկուսացած, նեղ դասային կազմակերպություն։ Գյուղերում գյուղացիների հետ մեկտեղ, թեև սահմանափակ քանակությամբ, ապրում և պետական ու սեփականատիրական հողերին տիրում են անձինք, որոնք պատկանում են այլ խավերի...։ Սրանց են պատկանում ամենից առաջ տեղացի գյուղական ազնվականությունը՝ մելիքները, բեգերը, աղալարները..., հոգևորականությունը, առևտրականները»[30]։ «Պատմականորեն ձևավորված» այս համադասային կազմը, նրա կարծիքով, նպաստում էր համայնքի քայքայմանը, որը հատկապես դրսևորվում է հարկային սիստեմի բնագավառում։ Հարկերի ամբողջ ծանրությունն ընկած էր չքավոր գյուղացիության վրա։ Հարկաչափը որոշվում էր կամայական ձևով և հաշվի չէր առնվում գյուղացիության տնտեսական փաստական վիճակը։ Ս. Եղիազարյանը համաձայնում է Ֆ. Մարկովի այն կարծիքի հետ, որ համայնքում կողմնակի անձանց համար գոյություն չունի հարկերի ու պարհակների սահմանված որևէ չափ։ Նրանք կա՛մ ընդհանրապես ազատված են դրանցից կա՛մ էլ վճարում են մասնակի ձևով։ Գյուղացիական վերնախավի մյուս ներկայացուցիչների հանդեպ ըստ էության ցուցաբերելով հանդուրժողական վերաբերմունք, նա հատկապես քննադատում է առևտրական դասի ներկայացուցիչների գյուղ ներթափանցման երևույթը, որը սեփականազրկում է գյուղացիությանը՝ անբարերար ազդեցություն ունենալով նրա «բարեկեցության» վրա[31]։ Ս. Եղիազարյանն առաջարկում էր «հարկային սիստեմի այդ ցավոտ տեղը» շտկել երկու եղանակով. կա՛մ անհրաժեշտ է հատուկ օրենքով տուրքավորել նաև կողմնակի անձանց (պետական գյուղացիությանը հավասարապես), որը, սակայն, կարող է հակասական լինել նրանց արտոնյալ վիճակին, կա՛մ էլ հարկերն ու պարհակները փոխարինել մեկ ընդհանուր տասնորդական դրամական հողատուրքով, որը բացառապես ընկնում է հողի վրա՝ որպես հարկադրման օբյեկտի[32]։ Այսինքն, ըստ էության Ս. Եղիազարյանն առաջարկում էր հարկումն իրականացնել հողաբաժիններին համապատասխան։ Բայց հաշիվ թե դա որևէ փոփոխություն առաջ բերեր գյուղացիության վիճակի

29 Վ. Ի. Լենին, Երկ, հ. 1, էջ 619—620։

30 С. А. Егиазаров, Исследования по истории учреждений в Закавказье, ч. I, с. 1.

31 «Свод материалов по изучению экономического быта государственных крестьян Закавказского края», т. I, с. 10—15.

32 Նույն տեղում։

մեջ։ Բանն այն է, որ հարկերի բաշխումը կատարվում էր համայնքի ունևոր անդամների կողմից, ուստի հարկերի հիմնական մասն էլ բաժին էր ընկնում չունևոր գյուղացիությանը։ Մյուս կողմից, վարձակալության տրված հողերի դիմաց ստացված համախառն արդյունքից գյուղացին հարկ էր վճարում ոչ թե հողի մի մասի, այլ ամբողջի համար, որը և նրան դնում էր տնտեսական ավելի ծանր պայմանների մեջ։ «Ինչպես հայտնի է,— գրել է Վ. Ի. Լենինը,— գյուղացիք բոլոր հարկերն ըստ հողի են բաժանում. հարկերի բաժինն ու հողի բաժինը նրանց համար միաձուլվում է մեկ՝ «շունչ», գաղափարի մեջ։ Մինչդեռ գյուղացիության քայքայումը, ինչպես տեսանք, տանում է հողաբաժնի դերի նվազումը ժամանակակից գյուղի երկու բևեռներում։ Բնական է, որ այդպիսի պայմաններում հարկերի բաշխումն ըստ հողաբաժնի (որ անքակտելիորեն կապված է համայնքի պարտադիր բնույթի հետ) հարկերի ծանրությունն ունևոր գյուղացիներից չքավորության վրա է գցում։ Համայնքը (այսինքն՝ համերաշխիքն ու հողից հրաժարվելու իրավունքի բացակայությունը) ավելի ու ավելի վնասակար է դառնում գյուղացիական չքավորության համար»[33]։

Որո՞նք են այն միջոցները, որոնցով Ս. Եղիազարյանը նպատակ էր հետամտում բարելավել գյուղացու տնտեսական դրությունը, վերացնել վաշխառությունը, պայմաններ ստեղծել գյուղատնտեսության զարգացման համար և, վերջին հաշվով, կանխել համայնքի քայքայումը։ Նա չէր ընդունում հասարակական այն հոսանքի առաջադիմական դոկտրինան, որն ակնկալում էր հողը վերցնել կալվածատերերից և տրամադրել գյուղացիությանը, առաջարկելով առավել «հիմնավոր» միջոցներ։ Ս. Եղիազարյանի կարծիքով անհրաժեշտ էր «էժան և ձեռնտու կրեդիտ բաժանել գյուղացիներին», նրանց վաշխառուներից ազատելու, «նոր հողեր գնելու և գնած հողերը ձեռքից չթողնելու» համար, «ջրանցքներ շինել» և «յուրացնել ազատ հողերը», «գյուղատնտեսական գիտությունների հետ ծանոթացնել գյուղացիներին» և ներդնել արտադրության առաջավոր եղանակներ, սահմանափակել հողերի առքն ու վաճառքը[34], կարգավորել հողերի վերաբաժանման ժամկետներն ու հավասարակշռել բնակչության աճի և համայնքի աշխատանքային հնարավորությունները[35] և այլն։ Նա չէր նկատում, որ համայնքի քայքայումը հասարակության կապիտալիստական փոխակերպության հետևանք է և հասկանալի է, որ գյուղացիության սոցիալական շերտավորման փաստը դիտում էր ոչ թե դասակարգային, այլ միայն ունեցվածքային շերտավորման տեսանկյունից[36]։

Ս. Եղիազարյանի առաջարկած «հիմնավոր» միջոցներն արմատական ոչինչ չէին տալիս և ոչ միայն ենթարկված էին տեսական սխալ կանխադրույթների, այլև հաշվի չէին առնում հայկական իրականության մեջ դրանք կիրառելու գործնական հնարավորությունները։ Դրանք ոչ այլ ինչ էին, եթե ոչ՝ ըստ

---

33 Վ. Ի. Լենին, Երկ, հ. 3, էջ 176—177։

34 Ս. Եղիազարյան, Ֆեոդալական հողատիրությունը Եվրոպայում, մեր երկրի հայաբնակ մասում և մեր գյուղացու այժմյան տնտեսական դրությունը, էջ 35—40։

35 С. А. Егиазаров, Исследования по истории учреждений в Закавказье, ч. I, с. 66.

36 А. С. Амбарян, Развитие капиталистических отношений в армянской деревне, Ереван, 1959, с. 6.

էության երկրի տնտեսական զարգացումը կապիտալիստական ուղիով տանելու «համադեմոկրատական միջոցառումներ»[37]։

Ս. Եղիազարյանի ուղեգծումները լոկ նպատակ էին հետամտում նոր իրադրության հետ կապակցելու և պահպանելու պատմական հին տնտեսական հաստատությունները։ Նա տեսնում էր վերջիններիս քայքայումը, բայց և փորձում էր դիմակայել զարգացման տրամաբանությանը։ Եվ տնտեսական զարգացման նրա ծրագիրը ձեռք էր բերում ռոմանտիկական բովանդակություն։

СЕЛЬСКАЯ ОБЩИНА В СИСТЕМЕ ЭКОНОМИЧЕСКИХ ВОЗЗРЕНИЙ С. ЕГИАЗАРЯНА

РОБЕРТ САРИНЯН

Резюме

Во второй половине XIX в. вопрос о сельской общине со всей остротой встал перед общественной мыслью. Быстрое развитие капитализма вызвало изменения в структуре общинных отношений. Встал вопрос об исторической правомерности существования общины.

Известный экономист С. Егиазарян дал анализ структуры общинных отношений, показав процесс ее разложения и картину социально-экономических сдвигов в деревне. Его программа преследовала цель путем совершенствования системы распределения земель, налоговой системы, кредита, введения прогрессивных методов производства и др. приостановить дальнейшее разложение общины, сохранив в новых условиях институт, противостоящий историческому прогрессу. Эта программа перекликается с концепциями экономического романтизма.

---

37 Վ. Ի. Լենին, Երկ, հ. 1, էջ 645։